

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

Թեստի կառուցվածքը

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Հ/հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Առաջադրանքների քանակն ըստ մասերի	Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների
1.	ընտրովի պատասխանով	22	22
2.	կարճ պատասխանով	9	9
3.	ընդարձակ պատասխանով	3	4
	ընդամենը	34	35

Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների

Հ/հ	ԹԵՄԱ	ՄԻԱՎՈՐԸ
1.	Բույսեր, բակտերիաներ, սնկեր	3
2.	Կենդանիներ	4
3.	Մարդ	11
4.	Ընդհանուր օրինաչափություններ	17
	Ընդամենը	35

Առաջադրանքների բաշխումն ըստ ստուգվող գործունեության տեսակների

Կենսաբանության թեստի բովանդակության ընտրությունը պայմանավորված է հետևյալ կարողությունների ստուգման անհրաժեշտությամբ.

- կենսաբանական պրոցեսների և երևույթների անվանում
- կենսաբանական պրոցեսների և երևույթների հաջորդականության իմացություն և պարզաբանում
- կենսաբանական երևույթների և կենսահամակարգերի կառուցվածքի ու ֆունկցիայի միջև պատճառահետևանքային կապերի համապատասխանության որոշում
- կենսաբանական պրոցեսների և երևույթների վերլուծում
- կենսաբանական խնդիրներ լուծելու ունակություն
- տրամաբանական մտածողություն և ստեղծագործական ներուժ

Քննական առաջադրանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կենսաբանության թեստի կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-31-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները երեքն են (32-րդ, 33-րդ, 34-րդ): 32-րդ առաջադրանքի յուրաքանչյուր ենթահարցի, ենթակետի ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր: 33-րդ և 34-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կենսաբանության թեստի առաջադրանքների նմուշներ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանք

Բուսական ո՞ր հյուսվածքի բջիջներին է բնորոշ արագ կիսվելը:

- 1) գոյացնող
- 2) հիմնական
- 3) փոխադրող
- 4) մեխանիկական

2. Կարճ պատասխանով առաջադրանք.

Ո՞ր որդերի տիպին է պատկանում մարդու ասկարիդը:

Պատասխան՝ _____